ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ
ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԷՐՏԷՐԵԱՆ

55589
ՍԻՈՆ
1990
71

digitised by A.R.A.R.@

ՍԻՈՆ

1990 ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ - ՄԱՐՏ 1-2-3

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԱՍՈՒՆԻ ԲԱԺԻՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՆԳԻՍՏ

ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

(1910 — 1990)

•

Ս. Յակոբեանց վշտակիր Միաբանութիւնը խոր սուգով կը յայտնէ անակնկալ մահը իր սիրելի հօր և մեծանուն Պետին, Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեանի, որ հանգեաւ ի Տէր Փետրուար 1, Հինգշաբթի գիշերուան ժամը 8.40ին։

Իրմով կ'անհետանայ Ս. Աթոռս երախտաշատ գործքով զարդարած Գահակալը, մէկը՝ Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ իշխաններէն և աշխարհ Հովուապետներէն և Հայ ժողովուրդի նուիրեալ և շնորհառատ զաւակներէն։

Անոր երեսնամեայ Պատրիարքութեան շրջանը լեցուն եղաւ թէ՛ իրագործումներով և թէ՛ քաղաքական աշխարհի պարտադրած ազէտներով և տխուր ու յուսաբեկիչ երևոյթներով, ներքին և արտաքին ճակատներու վրայ։

Իր մահով կ'ողբանք կորուսաը գորովագութ հօր մը, որ տառապեալներ շարունակ, սիրով և հոգածութեամբ, հոգա-

digitised by A.R.A.R.@

տար Հանգստացու Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն կարիքներուն։

Կ'աղօթենք նոր ժամանակներու մեր սրբազան բեմին պեր-ճարտարբան քարոզիչ, մեր արդի գրականութեան ներհուն մշակը, մեր եկեղեցական ու ազգային դէմքերը բերթողութեան ու բանաստեղծական արձակի ճամբով վերաքանդակող գրագէտը ու մեր անցեալի արժէքները յետնորդ սերունդներուն փոխանցող նուիրեալ ուսուցիչը։

Կ'աղօթենք մօտ կէս դարէ ի վեր Ս. Աթոռոյս պաշտօնաթերթի անխոնջ ու հեղինակաւոր խմբագիրը, մեր Եկեղեցւոյ աւանդութեանց գերազանցօրէն հաւատարիմ հոգեւորականը և մեր ուղղափառ դաւանութեան արի ու անվկանգ պաշտպանն ու ջատագովը։

Կ'աղօթենք մեզմէ յաւերժապէս բաժնուող և իր բարոյական արժանիքներով օժտուած անձնաւորութիւնը և Սուրբ Երկրին մէջ յարգուած ներկայացուցիչը Հայաստանեայց Եկեղեցւոյ և Պետը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան։

Աղօթենք և մաղթենք որ Տէրը լոյսերու մէջ հանգչեցնէ իր Եկեղեցւոյ բազմաշխատ սպասաւորը, անձնդիր հովիւը և բազմաշնորհ գրիչը, և Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին պարգեւէ հաւատարիմ ու անձնազոհ հովուապետներ, ի փառս Իր սուրբ անուան, և Հայ ազգի դաւանակից հոգեւոր, մշակութային, կրթական և ազգային ժառանգութեանց բարգաւաճման նախանձախնդրութեամբ։

Օրհնեալ ըլլայ իր յիշատակը։

digitised by A.R.A.R.@